

85 - 2  
L = 49

364

2789

N115.

2011

85-2

4-49



ԳԻՒՎԱՆՆԻ ՎԵՐԳԱ

## ԳԻՒՎԱՆՆԻ ԱՍՊԵՏՏՈՒԹԻՒՆ

(Cavalleria rusticana.)

Պատկեր Խոալիայի ժողովրդական կեանքից:  
Գիրմ. Թարդ.  
L. ԲԱԲԱՅԵԱՆ.

2081

2003

ՃՈՒԾԻ  
Տպարան Հայոց Հոգևոր Տեսչութեան:  
1897



## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ:

ԹՈՒՐԻԴՎՈՒՄ ՄԱՐԴԿԱՆ մի գեղեցիկ  
և սև բեխերով երիտասարդ. վարմունքը համար-  
ձակ, իսկ շարժումները անզգցչ:

ՔՈՒՐՈՒ ԱԼՖԻ, 40 տարեկան մի հարուստ և  
խաղաղ բնաւորութեամբ զիւղացի բեռնակիր,  
ածիլուած երեսով:

ԼՈԼԱ, նրա կինը. 20 տարեկան և խարտեաշ  
մազերով:

ՍՍ.ՆՏՈՒՑՅԱ, Թուրիդգուի սիրուհին: Սև մա-  
զերով, կրքոտ, գունատ և տխուր աղջիկ, որի 20  
տարին գեռ չէ լրացել:

ՆՈՒՆՑԻԱ, Թուրիդգուի մայրը. 60 տարեկան:  
ՔԵՌԻ ԲԻԱԶԻ, 50 տարեկան մի խոնարհ, հնարա-  
գէտ, բարեսիրտ և շատ չափաւոր ապրող զիւղացի:  
ՔԵՌԱԿԻՆ ԳԱՄԻԼԱՅ, նրա կինը. 40 տարեկան  
և շատ չափաւոր ապրող կին:

ՔԱՒՐԿԻՆ ՓԻԼՈՄԵՆԱ, մի պատուարժան և  
պառաւ գեղջուհի:

ՊԻՊՈՒՑՅԱ, զիւղական հասարակ աղջիկ:  
Պիւղացիներ և զինուորներ:

**Անցքը պատահում է Սեցիլիայի մի գիւղում**

Доказ. ценз. 14-го Августа 1897 г. Тифлисъ.

## ՏԵՍԻԼ.Ա.

Տեսարանը ներկայացնում է Սիցիլիայի մի  
գիւղի փոքրիկ և անկանոն հրապարակը: Հրապա-  
րակի ձախ կողմում ընկած ծառուղին վերջանումէ  
գիւղական եկեղեցու պալատի մօտ: Հրապարակի  
աջ կողմում՝ դէպի անտառը կոզի մացառներով  
(fichi d'India) շրջապատուած նեղ ճանապարհի  
աջ կողմում գտնուում է պառաւ Նունցիայի շար-  
ժական խանութը, որի դռան վրայից կանանչ ոստ  
է կախուած: Խանութի առաջ սեղան է դրուած,  
որի վրայ ձուերով հացով և բանջարեղիներով  
լցուած զամբիւղներ են շարուած: Պառաւ  
Նունցիայի խանութի դէմ ու դէմ ընկած է իտա-  
լական զինւորների երկյարկանի զօրանոցը, որի  
դռան վրայից իտալական ազգային զինանշանն է  
կախուած: Զօրանոցի մօտ գտնուում է Քեռի Բրազիի  
իջևանը, որի առաջ անձրեւից պաշտպանուելու հա-  
մար մի ուրիշ պարզ շինութիւն կայ: Զախ կող-  
մում մի հասարակ տուն և մի փոքրիկ փողոց:  
Փիլոմենայի տնակը գտնուում է հրա-  
պարակի ձախ կողմում: Գիւղի բոլոր տներն անշուք  
են և չեն ներկուած:

Քեռի Բրազին մի կապոց խոռ զլխին գրած,  
ձախ կողմից դէպի բեմն է գալիս: Նա այդ խոտը  
զնում է անձրեւից պաշտպանող շինութեան տակ:  
Քեռակին Գամֆիլան տանիքի վրայ շորեր է դասա-  
ւորում: Դէպի եկեղեցին տանող ճանապարհում մի  
խումբ գիւղացիներ, կանայք և աղջիկներ կան:  
Մի գիւղացի ձեռքերը պիսին զլած՝ ցածր ձայնով  
երգում է և յետոյ նայում Բրազիի խանութին:  
Գիւղական եկեղեցու զանգակը մարդկանց պատա-  
րազի է հրաւիրում: Այդ ժամանակ քաւորկին  
Փիլոմենան գոգնոցում մի քանի բաներ փաթաթած  
պառաւ Նունցիայի խանութից դուրս է գալիս:  
Սանտոցցան, յետոյ Պիպուցցան և մի քիչ ուշ  
քաւոր Ալֆիօն ներս են մանում: Զինւորները զօ-  
րանոցի առաջ կանգնած են:

ԳԱՄԻԼԱ. Առեւտո՞ւր ես արել, տիկին Փիլո-  
մենա:

ՓԻԼՈՄԵՆԱ. Զէ՞ որ այսօր Զատիկի է: Աստուած  
օրչնի մեր Զատիկլը:

ԳԱ.ՄԻԼԱ. (Սանտոցցային, որ շատ յուզուած է երեւում.  
Նա իւր զիսի աղլուխով երեսը ծածկել է: ) Զինի՞ գնումէս  
խօստովանուելու, բարեկամուհի Սանտա:

**ՍԱՆՏՈՒՅՑԱ.** (Նայում է նրան եւ առանց պատասխանելու շարունակում է իր մանապարհը:)

**ԲՐԱՋԻ.** (Գամիլային, որ ախոռի դրան մօտ կանգնած է:)

**Եատախօս,** գնա՞ տուն և գործդ տես: (Գամիլան տուն է գնում, յետոյ խօսում է մի զինորի հետ, որ զօրանոցի մօտ կանգնած է:)

**Սատանայի** կին ինձ միշտ բարկացնում է: (Գրւղացուն, որ Բրազիի իջեւանում նստած է:)

**Գնանք,** քառոր թէպաօ: (Գրւղացին Բրազիի հետ ախոռն է մտնում:)

**ՍԱՆՏՈՒՅՑԱ.** [Կանգնում է մայր Նունցիայի խանութի առաջ:]

**Մայր Նունցիա:**

**ՆՈՒՆՅԻԱ.** (Տեսնում է Սանտուցային: ] Ո՞չ, դո՞ւ ես . . . Ի՞նչ ես ուզում . . . Ի՞նչ է պատահել:

**ՍԱՆՏՈՒՅՑԱ.** Ոչի՞չ անշոգ եղիր, ես խսկոյն գնում եմ, միայն ասա՛, տանին է որդիդ:

**ՆՈՒՆՅԻԱ.** Մինչև այստեղ որդուս յետելիցն ես եկել . . . , նա այստեղ չէ:

**ՍԱՆՏՈՒՅՑԱ.** Ոչ, ամենակարող Աստուած:

**ՆՈՒՆՅԻԱ.** Կարծեմ դու իմանում ես, որ ես ձեր գործերում չեմ խառնուում:

**ՍԱՆՏՈՒՅՑԱ.** (Իր զիմի աղլուիը ուղղում է:) Ահա, մայր Նունցիա, դու չես նկատում իմ զրութիւնը: Ի սէր Քրիստոսի և Մարիամ Մագթաղենացու, . . . ասա, որտեղ է քո որդի Թուրիգդուն, աղաչում եմ, ասա՛:

**ՆՈՒՆՅԻԱ.** Նա գնացել է Մոնլէալ՝ գինի գնելու:

**ԳԻՂՈՄԵՆԱ.** (Ձեռքերը կողքերին դրած, դրան մօտ երեւում է:)

**ՍԱՆՏՈՒՅՑԱ.** Ո՞չ, ո՞չ նա երեկ երկրոյեան այսատեղ էր. նրան զիշելուայ ժամը երկուսին էլ են տեսել:

**ՆՈՒՆՅԻԱ.** Ի՞նչ ես ասում . . . Նա վերջին զիշերը առւն չէ եկել . . . Ներս մտիր:

**ՍԱՆՏՈՒՅՑԱ.** Ո՞չ մայր Նունցիա, ես չեմ գալ ձեր առւնը:

**ԲՐԱՋԻ.** (Ախոռի մօտ կանգնած) Դէ՛չ, աիկին Փիլոմենա, այսօր Զատաիկ է և ամենքը միմիանց հետ Հաշուում են. մինչև անգամ այդ կեսուրն էլ իւր Հարսնացուի հետ հաշուում է. չի՞ս ուզում, որ մենք ևս միմիանց գրկենք:

**ԳԻՂՈՄԵՆԱ.** Լոի՛ր, մեղաւոր ծերունի: (Նորից տուն է գնում: )

**ՆՈՒՆՅԻԱ.** Դէ՛չ խօսիր, ի՞նչ է պատահել Թուրիգդուի հետ:

**ՍԱՆՏՈՒՅՑԱ.** Այդպէս բարձր մի խօսի՛ր, մայր Նունցիա:

**ՊԻՊՈՒՅՑԱ.** (Մի գամբիւղ ձեռքին, աջ կրղմի փողոցով գալիս է:) Չի՞ս ուզում ձու գնել, մայր Նունցիա:

**ՆՈՒՆՅԻԱ.** Եթէ երեք հատն երկու սոլղիով կտաս, կառնեմ . . . այ տե՛ս, ես գեռ շատ ձու ունիմ:

**ՊԻՊՈՒՅՑԱ.** Որ այդպէս է այս ձուերը ես և երեխաներս կուտեհնք: Թո՛ղ միանգամ էլ նրանք իմանան, թէ ինչ է Զատիկը: (Ուզում է գնալ: )

**ԲՐԱՋԻ.** Դու էլ չես գնացել խօստովանուելու, մայր Նունցիա:

**ՆՈՒՆՑԻԱ. (Պիպուցցային, առանց Բազիկի վրայ ուշադրութիւն դարձնելու:** Լաւ, որովհետև այսօր Զատիկ է, համը մէկ աղղիով կվեցնեմ Ես 12 հատ եմ ուղղում, բայց մի հատ էլ աւելի պէտք է տաս: Խառնիր այն ձուերի հետ բայց զգոյշ չըկոտրեա: Հասկացած, զգոյշ Ահա փողը: Տե՛ս, մի բուռն պղինձ եմ տալիս քեզ:

**ԲՐԱՋԻ. Լսի՛ր, Պիպուցցա, եկ մի փոքր առևտուր էլ մենք անենք:** Գնանք տուն: (Պիպուցցայի հետ դէար ծախաղողմեան փողոցն է գնում:)

**ՆՈՒՆՑԻԱ. (Սանտոցցային:) Ասա տեսնեմ ինչ ես լսել թուրիդուի մասին:**

**ՍՍՆՏՈՒՑՅԱ. Ես ոչինչ չեմ լսել:**

**ՆՈՒՆՑԻԱ. Ինչու նա այս զիշեր տուն չէ վերադարձել, որտե՞ղ է եղել:**

**ՍՍՆՏՈՒՑՅԱ. (Ըղուխով երեսը ծածկում եւ լաց է լինում:)** Աի՞, մայր նունցիա, դու չդիտես, թէ ես ինչպէս տանջուում եմ:

**ՆՈՒՆՑԻԱ. Ուրիշն դու գիտե՞ս, թէ նա որտեղ է եղել:**

**ԱԼՖԻՈ. (Մի բաժակ ծեռքում՝ աջ կողմի նանապարհով ծխափողը բերանին գալիս է:)** Այն լաւ գինուցը ն սոլդիի ունիս, մայր նունցիա:

**ՆՈՒՆՑԻԱ. Սպասի՛ր տեսնեմ Թուրիդուն այսօր այն տեսակից Մոնղէալից պէտք է բերէր:**

**ԱԼՖԻՈ. Ուղիղ դեռ այստեղ է. ես նրան այսօր առաւօտեան տեսել եմ:**

**ԳԱՄԻԼԱՆ. (Կրկին երեւում է սրածում:)**

**ՍԱՆՏՈՒՑՅԱ. (Ալֆիօյի ծեռքից առնում է շիզը եւ տալիս նունցիային:)** Գնա և տես, թէ այն տեսակ գինուց էլի ունիս: (Նունցիան մտնում է խանութի խորքը:)

**ԱԼՖԻՈ. Կարծես դու այժմ այս տանն ես պատկանում, Սանտա:**

**ԳԱՄԻԼԱՆ. (Սրանից:)** Եկել ես քո գեղեցիկ Լույի հետ Զատիկը տօնելու, քաւոր Ալֆիօ:

**ԱԼՖԻՈ. Եւ այն էլ ինչպէս:** Գոնէ նշանաւոր տօները միասին հարկաւոր է տօնել:

**ՓԻՂՈՄԵՆԻԱ. (Մի աղրսին ծեռին կանգնած է տան դռան մօտ:** Մի քիչ յետոյ Գամիլային:) Զե՞ս ուզում պատարագին ներկայ լինել: Զլինի՞ կարիք չես զգում:

**ԲՐԱՋԻ. Նա գալիս է, գալիս Ահա, բարեւ, քաւոր Ալֆիօ:** Զե՞ս ուզում ինձ հետ դէպի Միլիտելու մի ճանապարհորդութիւն կատարել:

**ԱԼՖԻՕ. Վաղը, ուրախութեամբ:** Այսօր տօն է, վարպետ Բրագի: Եյսօր եկել եմ Զատիկը տօնելու:

**ՓԻՂՈՄԵՆԻԱ. Միւս տօները ում հետ ուզում ես տօնիր, բայց զատկական և ծննդեան տօները ընտանիքիդ հետ տօնի՛ր:**

**ԳԱՄԻԼԱՆ. (Ալֆիօյին:)** Հետաքրքիր է, թէ ինչ է ասում կինդ, երբ քեզ միայն Զատիկին և Ծննդին է տանը տեսնում:

**ԱԼՖԻՈ. Զեմ իմանում: Իմ գրութիւնն այնպէս է, քաւորկին Գամիլլա: Ես մի բեռնակիր եմ և դրա համար միշտ դուրսն եմ լինում. այսօր**

այստեղ եմ իսկ փաղը մի ուրիշ տեղ:

ՆՈՒՆՅԻԱ. (Լիքը հչը եւ մի աղլովս ծնովին ներս է մտնում. աղլովսը դնում է սեղանի բանջարեղինների վրայ): Այս գինին միւսից աւելի լաւ է, քաւոր Ալֆիօ: Երբ խմէք, այն ժամանակ ասածիս ճշմարտութիւնը կհասկանաք: Վերցրո՞ւ, անոյշ լինի: 18 սոլդի արժէ:

ՓԻԼՈՄԵՆԱ. Դու մեղաւոր ես, քաւոր Ալֆիօ: Զաշել կին ունեցողն չպէտքէ այդպէս խօսի:

ԱԼՖԻՅ. Բայց այնուամենայնիւ կինս ինձ վերայ փատահ է: Նա զիտէ, թէ ես ինչ պատուի տէր մարդ եմ: (Երկու զինորներ զօրանոցից դուրս են զախս եւ եկեղեցի գնում:)] Փառք Աստուծյ, մեր ամբողջ գիւղն էլ ինձ լաւ Ճանաչում է: [Պատարապի զանգակը երկրորդ անգամ դուրանջում է:]

ՓԻԼՈՄԵՆԱ. (Երեսը խաչէ հանում:) 0Հ՝, թող ամենաբարի Աստուծածը մեղ պաշտանէ: (Կողում է իւր դուռն եւ աղլովսը զիսին ծգելով՝ գնում է եկեղեցի:)

ԳԱՄԻԼԱ. Ես էլ եմ զալիս, ես էլ, տիկին Փիլոմենա: (Սրահից հեռանում է:)

ՖԻԼՈՄԵՆԱ: Ալֆիօին: Դու աւելի լաւ կանչեմ, եթէ կնոջդ համոզէիր եկեղեցի գնալու: Աի, դրանք անաստուծներ են, անաստուծներ:

ԱԼՖԻՅ. Ես այժմ ամենից առաջ ուզում եմ ձիուս մասին հոգալ յետոյ նրան կասեմ այն, ինչ որ դու ինձ ասացիլս Անհոգ եղի՛ր, չէ որ ես էլ մի քրիստոնիայ եմ:

ՆՈՒՆՅԻԱ. (Ալֆիօյն:) Տուր 18 սոլդին էէ:

ԱԼՖԻՅ. Իսկո՞յն, իսկո՞յն, Հոգիդ դուրս չեկաւ: Թո՞ղ առաջ համարեմ, է:

ԳԱ.ՄԻԼԱ. (Գրւիսն աղլովսով փաթաթած, ծախակողմեան առաջին փողոցով զախս է: Տան բանալին իւր մարդուն է տախս:)] Վերցրո՞ւ բանալին, զուցէ քեզ Հարկաւոր լինի և այն ժամանակ չգնաս եկեղեցի, երբ արդէն ժամասացութիւնը վերջանալու մօտ է լինում: (Փիլոմենայի հետ եկեղեցի է գնում:)

ԱԼՖԻՅ. Ահա քեզ 18 սոլդի: Վերցրո՞ւ: Յաջող առևտուր եմ ցանկանում: (Պանդաղ գնում է դէպի աջակողմեան զաշտային նանապարհը:)

ՆՈՒՆՅԻԱ. Ասա, քաւոր Ալֆիօ, որտե՞ղ ես տեսել իմ որդի Թուրիդուրին:

ՍԱՆՏՈՒՑՅ. (Նունցիայի հազարից քաշելով:)

Ի մէր Աստուծոյ, նրան ոչինչ չանես:

ԱԼՖԻՅ. (Վերադառնարով:) Երեկ վաղ առաւտեան ես նրան մեր տան մօտ պատահեցի: Նա այն ժամանակ շատապում էր: Ուզո՞ւմ ես, երբ ես նրան կրկին տեսնեմ, ասեմ քեզ մօտ գայ:

ՆՈՒՆՅԻԱ. Ո՞չ, ո՞չ: (Ալֆիօն գնում է: Սանտուցյային:) Բայց ինչու ես ինձ սաստում, որ ես նրան չասեմ:

ՍԱՆՏՈՒՑՅ. (Լուս եւ զրովս խոնարհում է:)

ՆՈՒՆՅԻԱ. Հըմ . . . ի՞շ բանի մասին ես մտածում:

ՍԱՆՏՈՒՑՅ. (Երես գողոցով ծածկում եւ լաց է գնում:) Աի, մայր Նունցիա:

ՆՈՒՆՑԻԱ. (Զարմացած) Լոյայի՞ . . . Աղֆիօյի  
Քնո՞ջ մասին . . .

ՍԱՆՏՈՒՑՑԱ. Ես Բ'ՆՀ անեմ, ԵՐԲ ԹՌՈՎՐԻԴՊՈՒՆ  
ԲՈՀ ԹՌՈՂՆՈՒՄ է . . .

ՆՈՒՆՑԻԱ. Օ՛հ, Դու բարի Աստուած: Ի՞նչ  
ես ասում . . . Դու սխալում ես, այդպիսի բան  
չէ կարող պատահել: Քաւոր Աղֆիօն նոյնպէս  
սխալում է . . . Նատ մարդիկ մերժուածի զըր-  
խարկ ունին:

ՍԱՆՏՈՒՑՑԱ. Ո՛չ, քաւոր Աղֆիօն չէ սխալ-  
ում . . . Այն մարդը ԹՌՈՎՐԻԴՊՈՒՆ է եղել:

ՆՈՒՆՑԻԱ. Որսեղից գիտես:

ՍԱՆՏՈՒՑՑԱ. Ես այդ գիտեմ, ԹՌՈՎՐԻԴՊՈՒՆ  
դեռ զինւոր ժամանակից սկսում էր Լոյային:

ՆՈՒՆՑԻԱ. Է՛հ, Բ'ՆՀ ես ասում: Երբ նա վե-  
րադարձաւ, այն ժամանակ Լոյան արդէն ամուս-  
նացած էր Աղֆիօյի հետ, իսկ ԹՌՈՎՐԻԴՊՈՒՆ էլ այդ  
բանից գոհ էր:

ՍԱՆՏՈՒՑՑԱ. Բայց Լոյան դժգոհ էր: Նա ԹՌՈ-  
ՎՐԻԴՊՈՒՆ դեռ չէ մոռացել:

ՆՈՒՆՑԻԱ. Իսկ այդ բանը ո՞րտեղից գիտես:

ՍՍ.ՆԱՌՈՅՑԱ. Ես այդ իմանում եմ: Ամեն ան-  
գամ, երբ Լոյան ԹՌՈՎՐԻԴՊՈՒՆ պատուհանիս մօտով  
անցուգարձ անելիս նկատում էր, այն ժամանակ  
այդ սատանայի կինն պատուհանից նրան իւր հա-  
յացքներով կախարդում էր: Լոյան միշտ աշխատում  
էր ԹՌՈՎՐԻԴՊՈՒԻ հետ խօսակցութիւն ունե-

ՆԱԼ և նրան միշտ ասում էր. „Ինչ ես անում  
այստեղ, քաւոր ԹՌՈՎՐԻԴՊՈՒ: Գիտե՞ս, որ Աստուած  
մեր ամուսնութեանը վկայ է. այժմ ես ուրիշին եմ  
պատկանում, ուստի դու պէտք է ինձանից խոյս  
տաս. ինչ անենք, Աստուած այսպէս է կամեցէր:“  
Լոյան այդ խօսակցութեամբ ուզում էր նրան փոր-  
ձել: ԹՌՈՎՐԻԴՊՈՒՆ պատուհանիս մօտ երգում և  
միսիթալում էր Լոյային, որ ուրիշ մարդու հետ  
էր ամուսնացել: Քեզ պատմածս մի հին պատմու-  
թիւն է: Առաջին սերը շուտ չեն մոռանում: Երբ  
ես ԹՌՈՎՐԻԴՊՈՒի երգելլ լուսում էի, սիրտս ուզում էր  
տրաքել: Ես ցնորւում էի, այո, ցնորւում: Ինչպէս  
կարող էի ես „ոչ“ ասել, երբ նա ինձ խնդրում էր.  
„Ասա, Սահատոցցա, արդեօք ծշմարիտ սիրում ես  
ինձ“ . . . Ես չեի կարողանում ուրիշ կերպ վա-  
րուել և նրան միշտ տառւմ էի. „Լսի՞ ինձ, ԹՌՈ-  
ՎՐԻԴՊՈՒ, ամենից առաջ Աստուծոյ անունով երգուիր:  
Նա երգուեց: Բայց երբ Լոյան այդ բանն իմացաւ,  
այնքան նախատեց մեզ, որ քիչ էր մնում մեռնի:  
Լոյան աշխատում էր ԹՌՈՎՐԻԴՊՈՒն ինձանից խլեր:  
Նա կարողացաւ նրան օրեցօր այնպէս փոխեր  
որ այժմ ուզում է ինձանից հեռանալ:  
(Զիոքերով շարժումներ է անում:) Աշու, ԹՌՈՎՐԻԴՊՈՒՆ  
այժմ խաբում է ինձ: Նա ինձ սրտանց չէ  
սիրում . . . Իսկ այժմ եթէ եղբայրներս ինձ այս  
դրութեան մէջ տեսնեն և այդ բանն իմանան, այն  
ժամանակ նրանք ինձ կսպանեն: . . . Բայց միթէ  
ես մեղաւո՞ր եմ: Այս, եթէ ԹՌՈՎՐԻԴՊՈՒն մի ուրի-

շին չփրէր, այն ժամանակ ես հանգիստ կմեռնէի՛:  
Երեկ երեկոյեան նա եկաւ ինձ մօտ և ասաց.  
”Յտեսութիւն, ես գնում եմ աշխատելու: “Նրա  
դէմքը բարութիւն էր արտայայտում: Օ՛չ, Աստու-  
ած իմ: Ինչպէս կարող է Յուդայի նման մատնիչ  
լինել մի այնպիսի մարդ, որի դէմքը բարութիւն  
է արտայայտում: Սյդ խօսակցութիւնից քիչյեաց  
մի տիկին ինձ ասաց, որ Թուրիզուին Լոյցի  
տան դռան մօտ է տեսել:

ՆՈՒՆՑԻԱ. (Խաչկնքում է.) Օ՛չ, ի՞նչ բաներ ես  
պատմեմ այսօրուայ սուրբ օրը, որդի՛ս: . . .

ՍԱՆՏՈՒՅՑԻԱ. Այսօր ինձ համար շատ վատ  
օր է, մայր Նունցիա:

ՆՈՒՆՑԻԱ. Եթէ ինձ լսես, կինաս և կչոքես  
խաշելութեան պատկերի առաջ:

ՍԱՆՏՈՒՅՑԻԱ. Ոչ, մայր Նունցիա, ես չեմ կա-  
րող եկեղեցի գնալ:

ՆՈՒՆՑԻԱ. (Ալլումը ծպում է պլիխն) Մեղայ քեզ  
Աստուած, ես էլ չեմ ուզում ժամասացութիւնից  
դրկուեր:

ՍԱՆՏՈՒՅՑԻԱ. Գնա՛, գնա՛, ես խանութի վրայ  
կ'հսկեմ . . . Բայց չփախենաս, ես գող չեմ:

ՆՈՒՆՑԻԱ. Բայց դու ի՞նչ ես ուզում աներ:

ՍԱՆՏՈՒՅՑԻԱ. Զեմ իմանում: Ես մի մուրաց-  
կանի նման նրան պէտք է այստեղ սպասեմ, մու-  
րացկան, որ ողումութիւն և գթութիւն է աղա-  
ղակում:

ՆՈՒՆՑԻԱ. Դու ուզում ես նրան այստե՞ղ,  
տանս սպասե՞լ:

ՍԱՆՏՈՒՅՑԻԱ. Անկող եղի՛ր, մայր Նունցիա, ես  
ձեր տունը չեմ մտնիլ: Ի սկզ Աստուծոյ ինձ շէմ-  
քիցդ մի արտաքսի՛ր: Եղի՛ր այնպէս գթասիրտ,  
ինչպէս երկնքի Ամենագթառատը: Ցիշի՛ր, որ այժմ  
գնում ես եկեղեցի աղօթելու: Խճղրեմ ինձ թոյլ  
տաս, որ վերջին անգամ կարողանամ նրա հետ  
խօսել: Թո՞ղ ի սկզ ձեր ննջեցեալների: (Քարձրածայն  
աղոթում է:)

ՆՈՒՆՑԻԱ. (Փնթփնթալսվ քայլերը ուղղում է ղեպի  
եկեղեցի: ) Օ՛չ, ամենաբարի Աստուած, օգնի՛ր մեզ:

ԲՐԱԶԻ. (Տապով գուրս է գալիս ախոռիցը) Սպասի՛ր,  
մայր Նունցիա, սպասի՛ր, մենք երկուսս միշտ ուշ  
ենք եկեղեցի գնում, որովհետեւ մեր խանութիւնը  
միշտ բաց ենք պահում: (Նունցիան այդ ժամանակ եկե-  
ղեցի է մտնում: Սանտուցային) Քաւոր աղջիկ Սանտա,  
Զատկին, Էլ եկեղեցի չես գնում: Եթէ ուզում ես  
միտսին գնանք եկեղեցի և պատկի համար աղօթենք:

ՍԱՆՏՈՒՅՑԻԱ. Թո՞ղ ինձ, ի սկզ Աստուծոյ:

ԲՐԱԶԻ. Դէ՛ւ քեզ չկերայ հօ, այ սատանան  
տանի քեզ հա՛ . . . կարծես ես չգիտէր, որ . . .

ՍԱՆՏՈՒՅՑԻԱ. Հանգիստ թռն ինձ, ասում եմքեզ:

ՊԻՊՈՒՅՑԻԱ. (Զախ կողմի փոքրիկ փողոցով գալիս է  
բուրովին ուժասպառ) Ժամասացութիւնից չեմ ուշա-  
ցել, քեռի Բլազի:

ԲՐԱԶԻ. Եթէ շտապես, կարող ես հասնել

(Պիպուցան եկեղեցի է գնում: Սանտուցցային: ) Այսպէս էլ բան: Ես բոլորովին նման եմ մեր զանգակահարին, որ մարդկանց եկեղեցի է հրաւիրում, իսկ ինքը միշտ դրսումն է մնում: (Աջակողմեան փողոցին նայում է: ) Այս, դրա համար էիր ուզում, որ քեզ մենակ թողնեմ . . . Աչա ապօռշը գալիս է . . . Դէ՛շ ես էլ գնամ եկեղեցի: (Գնում է եկեղեցի:

## ՏԵՍԻԼ Բ.

Նրանք: Թուրիդգու (աջ կողմի փոքրիկ փողոցով շտապով դալիս է: ) Սանտուցցա: (Նրան նկատելով, ինքը իրեն կորցնում է: )

ԹՈՒՐԻԴԳՈՒ. Աշ, Սանտուցցա . . . Ի՞նչ ես անում այստեղ:

ՍՍ.ՆՏՈՒՅՑԱ. Ես քեզ էի սպասում:

ԹՈՒՐԻԴԳՈՒ. Որտեղ է մայրս:

ՍԱՆՏՈՒՅՑԱ. Գնացել է եկեղեցի:

ԹՈՒՐԻԴԳՈՒ. Ուրեմն դու էլ գնայ եկեղեցի. ես տանը կմնամ:

ՍՍ.ՆՏՈՒՅՑԱ. Ոչ, ես չեմ գնալ եկեղեցի:

ԹՈՒՐԻԴԳՈՒ. Զատկին:

ՍԱՆՏՈՒՅՑԱ. Դու էլ գիտես, որ ես չեմ կարող եկեղեցի գնալ:

ԹՈՒՐԻԴԳՈՒ. Բայց ի՞նչ ես ուզում:

ՍԱՆՏՈՒՅՑԱ. Ես ուզում եմ քեզ հետ խօսել:

ԹՈՒՐԻԴԳՈՒ. Այստեղ այս փողոցնում:

ՍԱՆՏՈՒՅՑԱ. Այդ ինձ համար միևնոյն է:

ԹՈՒՐԻԴԳՈՒ. Բայց մարդիկ մեզ կարող են տեսնել ՍՍ.ՆՏՈՒՅՑԱ. Ես ասացի, որ այդ ինձ համար բոլորովին միևնոյն է:

ԹՈՒՐԻԴԳՈՒ. Դէ՛շ, ասա՛, ի՞նչ ես ուզում:

ՍԱՆՏՈՒՅՑԱ. Ասա՞՛, որտեղից ես գալիս:

ԹՈՒՐԻԴԳՈՒ. Օչօ՛: Այդ ի՞նչ է նշանակում:

ՍԱՆՏՈՒՅՑԱ. Ո՞ւր ես եղել այս գիշեր:

ԹՈՒՐԻԴԳՈՒ. Ուրեմն գու ուզում ես իմանալ, թէ

նրտեղ եմ եղել:

ՍՍ.ՆՏՈՒՅՑԱ. Ի՞նչու համար ես բարկանում, երբ ես քեզանից հարցնում եմ, թէ նրտեղ ես եղել: Միթէ չեմ կարող հանդիսաւ սրտով հարցիս պատասխանել:

ԹՈՒՐԻԴԳՈՒ. Եթէ անպատճառ ուզում ես իմանալ, Մոնրէալումն եմ եղել:

ՍՍ.ՆՏՈՒՅՑԱ. Սուտ ես խօսում, անցեալ գիշեր ժամը երկուսին այստեղ ես եղել:

ԹՈՒՐԻԴԳՈՒ. Դէ՛շ ուրեմն ես այնտեղ եմ եղել որտեղ ինձ լաւ եմ զգացել: Ի՞նչ ես ուզում գրանով ասել:

ՍՍ.ՆՏՈՒՅՑԱ. Այս, Թուրիդգու, ինչու ես ինձ շետ այդպէս փարւում: Նայի՛ր դէմքիս: Միթէ դու չես նկատում, որ ես վշտից մեռնում եմ: (Նրա աղութիւնը պիտի ուսերի վրայ է ընկնում: )

ԹՈՒՐԻԴԳՈՒ. Դու ես մեղաւորը: Դու միշտ յիմար բաների մասին ես մտածում: ուզիշին չես հաւատում, յետոյ ինձ մեղաւոր ես համարում ե

1010  
4/3 63

միշտ հայհոյում . . . Դու ինձ մի յիմմալ երփտասարդ ես համարում և քայլերիս միշտ հետեւում կարծես թէ ես չեմ կարող անել այն, ինչ որ ես եմ ցանկանում:

**ՍԱՆՏՈՒՅՑՅԱ.** Ես քո քայլերին ամենեին չեմ հետեւ և քեզ լրտեսեր. Ինձ միայն ասացին, որ քեզ այսօր առաւոտեան արկին Լոլայի դռան առաջ կանգնած են տեսել:

ԹՈՒՐԻԴԴՈՒ. Ո՞վ է ասել:

**ՍԱՆՏՈՒՅՑՅԱ.** Հենց Լոլայի ամուսին Ալֆիօն:

ԹՈՒՐԻԴԴՈՒ. **Այդպէս:** Նա: Ուրեմն դու ինձ այդպէ և ես սիրում Չես ամաչում, որ քաւոր Ալֆիօյին այդպիսի բաներ ես պատմում: Ուրեմն նա ինձ պէտք է սպանի, այնպէս չէ:

**ՍԱՆՏՈՒՅՑՅԱ.** Օ՞չ, Թուրիդդու, ինչ ես ասում: (Զոքում եւ ծեռքերը տարածում է:)

ԹՈՒՐԻԴԴՈՒ. **Վե՛ր կաց:** Գլխիս օյին մի խաղար: **Վե՛ր կաց,** ասում եմ քեզ: Ե՛հ, ուրեմն ես այստեղից հեռանամ:

**ՍԱՆՏՈՒՅՑՅԱ.** Ուզում ես գնալ և ինձ մենակ թողնել: Ուզում ես, որ քո վշտերով տանջուեմ:

ԹՈՒՐԻԴԴՈՒ. Ես ինչ կարող եմ անել, երբ դու չես ուզում ինձ հաւատալ: Դու կարող ես միայն ուրիշներին հաւատալ: Ես քեզ կրկին ասում եմ, որ ուրիշներն ուզում են քեզ խարել: Քաւոր Ալֆիօն քեզ խարել է: Ես գործելու էի գնացել: Հասկանում ես այժմ, թէ ինչ ես արել: Թարսի պէս

այդ բանն Լոլային ասելիս այն ժամանակ, երբ նրա ամուսին Ալֆիօն այժմ գիւղումն է: Տեսնում ես, թէ ինչ յիմմարութիւն ես արել:

**ՍԱՆՏՈՒՅՑՅԱ.** Նրա մարդը վաղ առաւօտեան է տուն եկել:

ԹՈՒՐԻԴԴՈՒ. Ո՞հ, դու այդ էլ զիտիս: Շատ լաւ: Ուրեմն դու միշտ քայլերիս հետեւում ես ծշմարիտ եմ ասում, որ ես այլ ևս պիսիս տէլլ չեմ:

**ՍԱՆՏՈՒՅՑՅԱ.** Է՞հ, ինչ ես ասում, դու իմ տէրն էլ ես. մինչև անգամ, եթէ դու ինձ մի ոչխարի նման մորթէեր, այն ժամանակ ես ձեռքերդ շան նման կիզեկի:

ԹՈՒՐԻԴԴՈՒ. Ուրեմն էլ ինչ ես ուզում:

**ՍԱՆՏՈՒՅՑՅԱ.** Բայց միթէ չես տեսնում, որ Լոլան կամենում է հոգիս հանել:

ԹՈՒՐԻԴԴՈՒ. Թո՞ղ Լոլային, ի սկը Աստուծոյ:

**ՍԱՆՏՈՒՅՑՅԱ.** Ա՛խ, բայց ինչո՞ւ նա ինձ չէ թողանումեւ ուզում է քո դէպի ինձ տածած սէրը յափրչտակել: Նա մտադիր է այդ սէրը մի այնպիսի արարածից յափշտակել որ այս աշխարհում բացի դրանից ուրիշ բան չունի:

ԹՈՒՐԻԴԴՈՒ. Զգոյշ, դու էլ չզիտիս թէ ինչ ես խօսում:

**ՍԱՆՏՈՒՅՑՅԱ.** Օ՞չ, ես այդ բանը շատ լաւ գիտեմ: Միթէ դու զինւորական ծառայութեանդ ժամանակ նրան չէի՞ր սիրում:

ԹՈՒՐԻԴԴՈՒ. **Այդ ժամանակին ալդէն անցել է:**

Այժմ Լոլան արդէն ամուսնացած և ուրիշի տաննն է։  
ՍԱՆՏՈՒՑՅԱՆ. Ի՞նչ անհնգ. գու նրան էլի սիրում ես, չնայած, որ նա արդէն ամուսնացած է։  
Միթէ նա քո դէպի ինձ տածած սէրը նախանձից  
դրտուած չէ զողացել։ Հաւատողւմ ես, որ ես քեզ  
այժմ էլ սիրում եմ չնայած, որ գու իմ վերաբերութեամբ մատնութիւն ես անում։

ԹՈՒՐԻԴԴՈՒ. Լոիր, լոիր։

ՍԱՆՏՈՒՑՅԱՆ. Ո՞չ, ես չեմ կարող լսել, որովհեալ  
ամբաս գժոխային բարկութեամբ լցուած է։  
Ի՞նչ պէտք է անեմ, եթէ գու ինձ թողնես և հեռանաս։

ԹՈՒՐԻԴԴՈՒ. Ես քեզ չեմ թողնում, հասկանում ես, բայց դու էլ ինձ չպէտք է խանգարես։  
Այժմէն ես քեզ ասում եմ, որ ես կամենում եմ  
զլիստ տէրը լինել և անել այն, ինչ որ ինձ գուր  
է գալիս։ Փառք Սատուծոյ, մինչեւ այժմ ոչ ոք ոտաներս դեռ չէ շղթայել։

ՍԱՆՏՈՒՑՅԱՆ. Ի՞նչ ես ուզում ասել։

ԹՈՒՐԻԴԴՈՒ. Ես ուզում եմ ասել, որ քո անհիմն նախանձը բոլորովին աւելորդ է։

ՍԱՆՏՈՒՑՅԱՆ. Ուրեմն ես մեզաւո՞ եմ Միթէ  
չեմ երեակայում զրութիւնու Ես էլ գիտեմ, որ  
Լոլան ինձանից աւելի գեղեցիկ է։ Նրա պարանոցն  
ու ձեռքերը թանկազին քարերով ին զարդարուած։  
Ալֆիօն Լոլայի բոլոր ցանկութիւնները կատարում  
է և չէ թողնում, որ իւր կինը մի որևէ բանի

կտրիք զգայ։ Նա Լոլային այնպէս է պահում, ինչ-  
պէս Սատուածածնի պատկերն եկեղեցու սեղանի  
վրայ են պահում։ Ա՛խ, այդ անաստուած կինը։  
ԹՈՒՐԻԴԴՈՒ. Այդ քո գործը չէ, ասում եմ քեզ։  
թո՞ղ Լոլային։

ՍԱՆՏՈՒՑՅԱՆ. Այ տես, թէ գու Լոլային ինչպէս  
ես պաշտպանում։

ԹՈՒՐԻԴԴՈՒ. Ո՛չ, ես նրան բոլորովին չեմ պաշտ-  
պանում։ Ինձ համար միւնցըն է, թէ Ալֆիօն Լո-  
լային ինչպէս է պահում։ Բայց մի բան ինձ գուր  
չէ գալիս, այսինքն այն, որ գու չես ուզում, որ ես  
զլիստ աերը լինիս։ Այդ ինձ համար բոլորովին  
անտանելի է։

### ՏԵՄԻԼ Գ.

Նրանք և Լոլան (աջ կողմին փոքրիկ փողոցով զախս է։)  
ԼՈԼԱ. Օ՞չ, Թուրիդդու։ Գուցէ գու տհսել ես  
թէ արգեօք մարդս եկեղեցի է գնացել։  
ԹՈՒՐԻԴԴՈՒ. Զգիտեմ, Լոլա, ոշովհեաւ ես հենց  
այժմ եկայ։

ԼՈԼԱ. Նա ինձ ասաց, որ գնում է դարբնի  
մօտ իւր թխագոյն ձիու համար պայտ բերելու,  
և շուտով կգայ եկեղեցի։ Իսկ դուք դուք այստեղ  
կանգնել և խօսում էք։ Դուք էլ Զատկի տօնը  
այստեղ, դրաւումն էք կատարում։

ԹՈՒՐԻԴԴՈՒ. Սանտուցցան հենց այստեղ էր

ուզում որ . . . .

ՍԱՆՏՈՒՅՑԱ. Ես ասացի նրան, որ այսօր մի նշանաւոր և սուրբ օր է և Աստուած երկնքից ամեն բան տեսնում է:

ԼՈՂԱ. Դուք եկեղեցի չեք գնում:

ՍԱՆՏՈՒՅՑԱ. Այն մարդիկն են եկեղեցի գնում, որոնք մաքուր խիղճ ունին, քատորկին Լոլա:

ԼՈՂԱ. Ես այդ բանի համար Աստուծուց շնորհակալ եմ և համբուրում եմ գետինը: (Խոնարհում եւ մատները գետին բնելով, մօտեցնում է շրթունքներին:)

ՍԱՆՏՈՒՅՑԱ. Լոլա, դուք շատ լու եք անում, որ Աստուծուն շնորհակալութիւն եք յայտնում: բայց երբեմն գետինը համբուրում են այնպիսի անձնաւորութիւններ, որոնք արժանի չեն անգամ նրա վրայ կանգնելու:

ԹՈՒՐԻԳԴՈՒ. Դնանք, Լոլա, այլ ևս այստեղ մնալու կարիք չունի՞ք:

ԼՈՂԱ. Իմ մասին մի՛ հոգար, Թուրիգդու, ես մենակ էլ կարող եմ ճանապարհս դանել ևս չեմ ուզում ձեր խաղը խանգարել:

ԹՈՒՐԻԳԴՈՒ. Ես քեզ ասում եմ, որ ես այստեղ այլ ևս գործ չունիմ . . . . :

ՍԱՆՏՈՒՅՑԱ. (Նրան պահերով:) Ո՛չ, մենք միմիանց հետ խօսելու գեռ շատ բաներ ունինք:

ԼՈՂԱ. Դէ՛չ, յաջողութիւն եմ ցանկանում: մնացեք այստեղ և խօսեցեք, ես ճանապարհս կը գտնեմ: (Ֆնում է եկեղեցին)

## ՏԵՍԻԼ Դ.

ԹՈՒՐԻԳԴՈՒ. (Կատաղած) Տեսար, ինչ արեցիր: Ախ:

ՍԱՆՏՈՒՅՑԱ. Այ՛ո, տեսնում եմ:

ԹՈՒՐԻԳԴՈՒ. Ուրեմն դու այդ գիտմամբ արիր:

ՍԱՆՏՈՒՅՑԱ. Այ՛ո, գիտմամբ:

ԹՈՒՐԻԳԴՈՒ. Այ դու Յուդայի արեան արժանանաս հա . . . . (Գեռքը բարձրացնում է: ) Գրողը տանիքեղ . . . :

ՍԱՆՏՈՒՅՑԱ. Դէ՛չ սպանի՛ր ինձ էլի՞ . . . :

ԹՈՒՐԻԳԴՈՒ. Դու այդ գիտմամբ արեցիր, գիտմամբ:

ՍԱՆՏՈՒՅՑԱ. Դէ՛չ սպանի՛ր ինձ էլի՞ . . . :

ԹՈՒՐԻԳԴՈՒ. Ո՛չ ես չեմ ուզում քեզ միանգամից սպանել: (Ուզում է գնալ: )

ՍԱՆՏՈՒՅՑԱ. Դու ուզում ես հեռանալ և ինձ մենակ թողնել:

ԹՈՒՐԻԳԴՈՒ. Այ՛ո, և դու դրան արժանի ես: (Եկեղեցու զանգակը դողանջում է: )

ՍԱՆՏՈՒՅՑԱ. Մի՛ թողնիր ինձ, Թուրի՛գդու: Լսում ես զանգակի ձայնը:

ԹՈՒՐԻԳԴՈՒ. Ես չեմ ուզում քո ստրուկը լինել, հասկանում ես:

ՍԱՆՏՈՒՅՑԱ. Դու կարող ես ինձ հետ այնպէս վարուել, ինչպէս ցանկանում ես, բայց Լոլան չէ կարող:

ԹՈՒՐԻԴԴՈՒ. Այժմ արդէն բաւական է: Ես  
գնում եմ որովհետև քեզանից բոլորովին կշտացայ:  
ՍԱՆՏՈՒՑՅԱ. Ուշը ես ուզում գնալ:

ԹՈՒՐԻԴԴՈՒ. Որտեղ ես ինձ լաւ եմ զգում...:  
Ես գնում եմ պատարագին ներկայ գտնուելու:

ՍԱՆՏՈՒՑՅԱ. Ոչ, ո՞չ դու գնում ես եկեղեցի  
Լոլային ցոյց տալու, որ իբր թէ դու ինձ նրա սիրության համար այստեղ թռղեցիր, և իբր թէ ես քեզ համար այստեղ ոչինչ եմ:

ԹՈՒՐԻԴԴՈՒ. Դու խելքք բոլորովին կորցրել ես  
ՍԱՆՏՈՒՑՅԱ. Ես քեզ խնդրում եւ աղաջում  
եմ, Թուրիդդու, մի' գնալ եկեղեցի քեզ դէմ մենքանչելու: Այսօր մի' գնալ, ի սէ՛ր Աստուծոյ միթէ դու ուզում ես այդ կնոջ համար ինձ խայտառակի՞լ:

ԹՈՒՐԻԴԴՈՒ. Իսկ դու ուզում ես ամբողջ աշխարհին յայտնել որ ես քո սարուկն եմ և ինձ զետ վարում ես որպէս մի յիմար երիտասարդի շետ...:

ՍԱՆՏՈՒՑՅԱ. Քո ինչ գործն է, թէ աշխարհին է ասում զբանը կոյ, որ ես յուսահատութիւնից չմեռնեմ:

ԹՈՒՐԻԴԴՈՒ. Դու բոլորովին ցնորուել ես:  
ՍԱՆՏՈՒՑՅԱ. Այո, ճշմարիտ, որ ես ցնորուել եմ,  
բայց դու աշխատիր ինձ չյուսահատեցնել:  
ԹՈՒՐԻԴԴՈՒ. (Նրանից աղատութով) Դէհ, բաւական է՛. այ զբո՞ղը տանի քեզ, հա:  
ՍԱՆՏՈՒՑՅԱ. Ի սէ՛ր Փրկչի և Ս. հաղորդու-

թեան, Թուրիդդու. Լոլայի համար մի' հեռանար ինձանից: (Թուրիդդուն գնում է, Սանտուցան սաստիկ կատաղած:) Անիծեալ լինի քո Զատիկը.

## ՏԵՍԻԼ Ե.

Ալֆիօ: (Աջ կողմի մանապարհով գալիս է:)

Սանտուցա: (Բհմի մէջ տեղը կանգնած:)

ՍԱՆՏՈՒՑՅԱ. Քեզ Աստուծ ուղարկեց ինձ  
մօտ, բաւո՛ր Ալֆիօ:

Ալֆիօ. Պատարագը դեռ չէ վերջացեր,  
Սանտուցա:

ՍԱՆՏՈՒՑՅԱ. Դու ուշացել ես. բայց կինդ Թուրիդդու Մազգայի հետ քեզ համար եկեղեցի է գնացեր:

Ալֆիօ. Ի՞նչ ես ուզում ասել:  
ՍԱՆՏՈՒՑՅԱ. Ուզում եմ ասել, որ կինդ սեղանի սրբելի նման ոսկով պձնուած թափառում  
և քեզ պատամում է:

Ալֆիօ. Բայց այդ քո գործը չէ:  
ՍԱՆՏՈՒՑՅԱ. Ես քեզ համար եմ ցաւում,  
բաւո՛ր Ալֆիօ: Զնայած, որ դու աշխարհում թափառում ես հաց վաստակելու և կնոջտ համար ընծանել առնելու, Լոլան տունդ ուրիշ ձեռփ է զարդարում...:

Ալֆիօ. Ի՞նչ ես ասում, Սանտուցա:

ՍԱՆՏՈՒՅՅԱ. Ես ուզում եմ ասել, որ երբ դու վատ թէ յաւ եղանակին զանաղան տեղերում թափառում ես փող վաստակելու, այն ժամանակ կինդքու տունը կեղտոտում է:

ԱԼՖԻՅ. Օանտա, եթէ դու Զատկին էլ այդպէս շուտ հարբում ես, այն ժամանակ ես գինին քթովդ կհանեմ:

ՍԱՆՏՈՒՅՅԱ. Ես հարբած չեմ, քաւոր Ալֆիօ:

Ես շատ յաւ հասկանում եմ, թէ ինչ եմ խօսում:

ԱԼՖԻՅ. Շատ լաւ, ուրեմն եթէ դու Ճշմարիտ ես ասում, այն ժամանակ ես շնորհակալ եմ քեզպանից և համբուրում եմ ձեռքերդ այնպէս, ինչպէս կ'համբուրէի մօրս ձեռքերը, եթէ նա գերեզմանից յարութիւն առնէր: Իսկ եթէ ասածդ սուտ լինի, այն ժամանակ աչքերդ պէտք է հանեմ, որ դու չկարողանաս անգամ լաց լիներ բացի դրանից, ես ձեր անարդ ազգականներին էլ կ'պատժեմ:

ՍԱՆՏՈՒՅՅԱ. Ես չեմ կարող լաց լիներ քաւոր Ալֆիօ: Ես լաց չեղայ մինչև անգամ այն ժամանակ, երբ Թուրիլդու Մագդան ինձ անպատռեց և Կոլայիդ մօտ գնաց:

ԱԼՖԻՅ. (Յանկարձ հանգստանարկ:) Եթէ Ճիշտ է ասածդ, այն ժամանակ շնորհակալ եմ քեզանից, Սանտա:

ՍԱՆՏՈՒՅՅԱ. Ինձանից ամենեին շնորհակալ մի լինիր, որովհետեւ, ես այժմ բոլորովին թշուառ եմ և մի ստոր մատնիչի դեր եմ կատարում:

ԱԼՖԻՅ, Ո՛չ, Սանտա, թշուառ և մատնիչ են նրանք, որոնք դանակը մեր սրտերն են կոխում: պէտք է նրանց սիրութ մի թունաւոր դաշոյնով պատռել: բայց երբ դու Կոլային տեսնես, ասա՞ որ ես գնացի տուն քաւոր Թուրիլդուի համար ընծայ բերելու:

## ՏԵՍԻԼ Զ:

(Մարդիկ եկեղեցուց դուրս են գալիս եւ դէպի աջ ու ձախ կողմը գնում: ) Թուրիլդուն, Լոյան, Գամիլլան, Նունցիան և Փիլոմենան: (Գալիս են առաջ, առանց Սանտուցային նկատերը, որ աղբուիր զիսխն ծգած, մանապարհ աջ կողմում կանգնած է: ) Բրազի: (Եկեղեցուց բոլորից վերջն է դուրս գալիս եւ Սանտուցային նկատում: )

ԲՐԱԶԻ. Ո՞չ, քաւոր աղջիկ Սանտա, գուցէ դու ուզում ես այն ժամանակ եկեղեցի գնալ երբ այնտեղ ոչ ոք չկայ:

ՍԱՆՏՈՒՅՅԱ. Ես շատ մեղաւոր եմ, քեռի Բրազի: (Դնում է եկեղեցի: )

ԲՐԱԶԻ. (Մի քանի բոպէով մտնում է ախոռը: )

ԳԱՄԻԼԼԱ. (Դնում է իրանց տունը: )

ՆՈՒՆՑԻՅԱ. (Դնում է խանութ շալը այնտեղ Թողերը: )

ԹՈՒՐԻԼԴՈՒ. (Լոյային, որ ուզում է գնալ: ) Մեր առանց մի որեւէ խօսք առելու ուզում ես տնիւն գնալ, Լոյա:

**ԼՈԼՈ.** Ես ուզում եմ տուն գնալ, որովհետեւ  
մարդուս մասին բոլորովին տեղեկութիւն չունիմ  
այսօր նա եկեղեցումն չէր:

**ԹՈՒՐԻԴՈՒՆԻ.** Եջ՛, այդ բանի մասին մի' հոգար,  
նա իսկոյն այդտեղ, գիւղի հրապարակը կ' գայ: Այժմ,  
սկսելի ընկերնե՞ր և հարևաննե՞ր, մեր բոլորի կե-  
նաց համար մի կաթիլ գինի խմենք, որովհետեւ  
այսօր Զատիկ է: Ե'կ այստեղ, քաւորկին Գամիլլա,  
դու էր, արիին Փիլոմենա:

**ՓԻԼՈՄԵՆԱ.** Գալիս եմ, գալիս: (Գնում է տուն եւ  
շալ ախտեղ թողնում:)

**ԼՈԼՈ.** Ես շնորհակալ եմ, քաւոր Թուրիդուս,  
որովհետեւ խմելու բոլորովին ախորժակ չունիմ.

**ԹՈՒՐԻԴՈՒՆԻ.** Խոնդիլքս չպէտքէ մերժես, Հոլա՛,  
այդ նշանակում է ինձ միայն բարկացնել . . . :

**ԼՈԼՈ.** Ես քեզ բարկացնելու ոչ մի հիմք չունիմ:  
**ԹՈՒՐԻԴՈՒՆԻ.** Ես էլ եմ կարծում: Քեզ ին'չ եմ  
արել, որ դու ինձ բարկացնես: Սյսօր Զատիկ է.  
ամեն բան պէտք է մաքուր լինի, և մարդիկ պէտք  
է միմիանց հետ միշտ հաշտ ապրեն: ԴԵ՛հ, այժմ  
քաւոր Ալֆիօյին էլ այստեղ կանչենք, թող այսօր  
նա էլ մեզ հետ խմի:

**ԹՐՈ.ՁԻ.** (Մօտենալով) Ուրախ եղէք, ուրախ:

**ԳԱՄԻԼՈ.** Ի հարկէ այդպիսի դէպքելում դու  
միշտ ուրախանում ես: (Իւր շալ մեռքերի վրայ է ծգում:)

**ԹՈՒՐԻԴՈՒՆԻ.** (Իւր մօր խանութին մօտենալով.) Այժմ  
լաւ տեսակից էլի ունիս, մայրի՛կ:

**ՆՈՒՆՑԻԱ.** (Խանութի կողքից մոթմոթալով դուրս է գալիս:) Պյու լաւ տեսակից գու պէտքէ այսօր Մոնրէալից  
բերէիլս:

**ԹՈՒՐԻԴՈՒՆԻ.** Ախը այսօր Զատիկ է, մի՛ բար-  
կանար: Ջբերելու պատճառը քեզ յետոյ կասեմ:  
բայց տեսնում ես, որ այժմ ընկերներս այստեղ  
սպասում են:

**ՓԻԼՈՄԵՆԱ.** Սյու խմիչքից գու այսօր փող չը-  
պէտքէ աշխատես, մայր նունցիս:

**ԹՈՒՐԻԴՈՒՆԻ.** Ե'ս կ' վճարեմ, ե'ս: (Նունցիան նորից  
խանութի խորքն է մտնում:)

**ԹՐՈ.ՁԻ.** ԴԵ՛հ, այժմ ով փող ունի, թող հանին:

**ԼՈԼՈ.** (Թօւրհղումն: ) Ո՞վ է իմանում, թէ գու  
զինւոր եղած ժամանակդ ուրիշ կանանց հետ ինչ-  
պիսի բաներ ես արել: Ինչպէս երկում է, գու այդ  
բանում շատ փորձուած ես:

**ԹՈՒՐԻԴՈՒՆԻ.** Ախ ինչ կանչյը, ես ազատ կա-  
նայք չեմ պահել գու բոլորովին սխալում ես, իմ  
միտքը միշտ դէպի հայրենիքս էր ուղղուած: Ես  
միշտ հայրենիքս մասին էի մտածում:

**ԳԱՄԻԼՈ.** Սյդպիսի պատմութիւն միայն մեր  
ննջեցեալներին կարող ես պատմել:

**ԹՈՒՐԻԴՈՒՆԻ.** Ճշմարիտ եմ ասում, քաւորկին  
Գամիլլա: Դու գիտես, որ ինձ նման մարդիկ կա-  
նանց համար մեղք են . . . : Կարելի է միշտ տես-  
նել, որ երբ կանայք մի զինւորի կամ երիտասարդի  
տեսնում են, սկսում են ասել՝ «Թու, թխահեր գե-

զեցիկ երիտասարդ, ե՛կ այստեղ. « և այնուշետև նրանք սկսում են իրանց կրակոտ հայեացքներով երիտասարդներին գրգռել. բայց ես այն մարդու կանցից չեմ, որոնց մասին առածն ասումէ. » Հեռաւորութիւնը սէրը պաղեցնում է: «

ԼՈՂԸ. Ախ, արդեօք կարելի՞ է այս մարդու կանց հաւատալ:

ԹՈՒՐԻԴՈՒ. Այդ կարող ես կանանց մասին ասել: Մի մարդ, որ իւր ապագայ կնոջից հազար խոստումներ է ստացել և երբ այդ պարոնը օտար երկիր է գնում, միշտ իւր սիրուշու մասին մտածելով ոչ քնում է և ոչ էլ ուտում, յանկարծ նրան գրում են, գիտես ինչ . . . ։ Գիտես, նա արդէն ուրիշ մարդու հետ է ամուսնացել. «— այդ լուրն երիտասարդին կարծես կայծակահար է անում:

ԼՈՂԸ. Դու ուզում ես ինձ հաւատացնել, որ երբ մարդիկ օտար երկրում այնքան կանանց շըլացնում են լինում, միշտ իրանց ընտրած աղջկայ մասին են մտածում: Ոչ, ամենելին: Եթէ դու ուզում ես Ճիշտը իմանալ, ասեմ քեզ: Եթի այդ մարդիկ տուն են վերադառնում, նրանք գրանց միաթարելու համար են խոստումներ տալիս:

ԹՈՒՐԻԴՈՒ. Դէ՛ք, լաւ, այդ բանի մասին այլևս չխօսենք:

ՆՈԽՆՑԻԱ. (Խանութի խորքից դրսէ զափս, զինով լցուած խեցեխն մի աման ու բաժակ ծնոքում: ) Այն լաւ. տեսակից էլ չկայ, մեղաւորը դու ես, Թուրիդու:

ԳԱՄԻՆԱՅ. Ուրախ եղէք, ուրախ ԲՐԱՋԻ. Դէ՛ք այժմ սկսէնք խմեր: Խնչպէս դու խոստացել ես, այնպէս անենք:

ԹՈՒՐԻԴՈՒ. Ինչ որ խոստացել եմ, այն էլ կրկատարեմ: Իսկ դու, մայրիկ, չի՞ս ուզում մեզ հետ խմեր:

ՆՈԽՆՑԻԱ. Ոչ, ես չեմ ուզում գինի խմեր: (Քթի տակ մոթմոթալով գնում է:)

ԹՈՒՐԻԴՈՒ. Մայրս ինձ վրայ բարկացել է. և ես զրա պատճառը գիտեմ . . . ։ Ախ, այդ պառաւները, պառաւները: Նրանք չեն ուզում իշեել թէ իրանց երիտասարդութեան օդերում ինչ բաներ են արել: Կենացդ, Լոլա: Կենացդ, բաւորկին Փամիլլա: Խմբ'ր, բեռի Բրազի: Այսօր պէտք է մօռանանք մեր ախրութիւնը: (Թուրիդուն ներկայ երողների բաժակները գինով լցնում է եւ նրանց տալիս: Նրանք զինին խմելուց յետոյ բերանները ծնռքերով սրբում են. միայն Լոլան իւր բերանը սրբում է զողնոցով: )

## ՏԵՍԻԼ Է.

Նրանք և Աղջիօ (Աշ կողմի փողոցով: )  
ԱԼՖԻՕ. Բարեկ՝ ձեզ:

ԹՈՒՐԻԴՈՒ. Ե՛կ այստեղ, բաւոր Աղջիօ: Մեր կենացը դու էլ պէտք է խմես: (Գինով բաժակը լցնում է եւ նրան տալիս: )

ԱԼՖԻՕ. (Չեռքով բաժակին խփում է եւ յետ գարճնում: )

Ենորհակալ եմ, քաւոր Թուրիդդու: Ես քո դինին չեմ խմիր որովհետև այդ ինձ կարող է մնասել:

ԹՈՒՐԻԴԴՈՒ. (Մի առ ժամանակ նրան զարմացած նայում է եւ յետոյ հանգստանում:) Ինչպէս դու ցանկանում ես: (Գիրն բաժակից թափում է զետնի վրայ, բաժակը նստարանի վրայ է դնում եւ սկսում սուր հայեացքներով դիսել:

ԲԲԱՋԻ. (Այնպիսի շարժումներ է անում, կարծես մէկը ախոռից կանցում է:) Գալիս եմ, գալիս:

ԹՈՒՐԻԴԴՈՒ. Ուզու մէք ինձ բան ասել, քաւոր Ալֆիօ:

ԱԼՖԻՕ. Ո՛չ, քաւոր Թուրիդու: Ինչ որ ուզում եմ ասել քեզ, դու այդ արդէն գիտես:

ԹՈՒՐԻԴԴՈՒ. Ես պատրաստ եմ ամեն բան կատարելու:

ԲԲԱՋԻ. (Ախոռից իւր կնոջը նշաններով հասկացնում է տուն գնալ.)

ԳԱՄՄԻՎԱ. (Գնում է:)

ԼՈՂԱ. Բայց այս ինչ է նշանակում:

ԱԼՖԻՕ. (Լոլային չէ պատրաստանում եւ նրան հարուածում է:)

Ուզում ես ինձ հետ կարծ ժամանակով դաշտը զար մենք կարող ենք այնտեղ մեզ յայտնի դործի մասին ազատ և ապահով խօսել:

ԹՈՒՐԻԴԴՈՒ. Դու ինձ սպասիր մեր գիւղի ծայրի տների մօտ, այժմ ես մի քանի րոպէօվ տուն եմ գնում կարեոր բաները բերելու: Ես շուտով քեզ մօտ կ'գամ: (Նրանք միմիանց գրկում են. համբուրելու ժամանակ Թուրիդուն Ալֆիօյի ականջը կծում է:)

ԱԼՖԻՕ. Լաւ կծեցիր, քաւոր Թուրիդու: Ես ուզում եմ ասել, որ դու լաւ գիտաւորութիւններ ունիս: Ամեն մի պատուաւոր մարդ այսպէս պէտք է վարուէլ:

ԼՈՂԱ. Ո՞չ, կցս Թարիամ: Ո՞ւր ես գնում Ալֆիօ:

ԱԼՖԻӨ. Տեռու տեղ չեմ գնում: կարծեմ այդ բանը քեզ չէ ուրախացնում, որովհետև դու աւելի ուրախ կլինէիր, եթէ ես երբեք չվիրադառնայի: ՓԻԼՈՄԵՆՆԱ. (Հեռանում է, կակագերով խօսում:) Ո՞չ, Աստուածածին:

ԹՈՒՐԻԴԴՈՒ. (Ալֆիօյին մի կողմ քաշերով:) Լոիր ինձ, քաւոր Ալֆիօ, Աստուած է վկայ, որ ես քեզ կթողնէի, որ ինձ սպանէիր, որովհետև գիտեմ, որ մեղաւորն ես եմ . . . : Բայց ես ինձ Սանտայի դէմ մեղաւոր եմ զգում, որ նորան թշուառութեան խոր անդունդի մէջ ձգեցի. և քանի որ Աստուած կայ, քեզ շան նման պէտք է սպանեմ, նրա պէս մի թշուառին թողնելով փողոցում մուրալու:

ԱԼՖԻӨ. Եաա լաւ. մեղանից իւրաքանչիւրը ինչ որ կարող է կանի:

## ՏԵՍԻԼ Բ.

Թուրիդու և Լոլա:

ԼՈՂԱ. Ո՞չ, քաւոր Թուրիդու, դու ԷԼ ինձ

այս դրութեան մէջ թողնելով ինձանից հեռա-  
նում ես:

ԹՈՒՐԻԴՈՒՆ. Ես քեզ հետ այլևս գործ չունիմ:  
Այժմէն արդէն մեր երկուսի մէջ ամեն բան վեր-  
ջացած է: Դու տեսա՞ր, որ ես և ամուսինդ կեան-  
քի կամ մահուան համար միմիանց դրկեցինք և  
համբուրեցինք: (Կանչում է:) Մայր:

ՆՈՒՆՑԻԱ. (Դուան շեմքում կանգնած:) Հըլմ, այժմ  
ի՞նչ ես ուզում:

ԹՈՒՐԻԴՈՒՆ. Մայր, ես այժմ մի կարեւոր գործի  
համար գնում եմ: Չեմ կարող այդ գործը յետա-  
ձգել: Տուր ինձ փոքրիկ դուան բանալին, ես ու-  
զում եմ գինետուն գնալ և այնտեղից մի բան  
վերցնել: Բացի դրանից, մայր, այժմ ինձ համբու-  
րիր այնպէս, ինչպէս դու ինձ համբուրեցիր այն  
ժամանակ, երբ ես զինւոր էի գնում: որովհետեւ  
կարծում էիր, որ ես չպէտք վերադառնայի: Լաւ  
հրամբուրիր ինձ, որովհետեւ այսօր Զատիկ է:

ՆՈՒՆՑԻԱ. Ի՞նչ ես խօսում:

ԹՈՒՐԻԴՈՒՆ. Այդ բանի վերայ ուշադրութիւն  
մի՝ դարձնիր . . . , որովհետեւ զինին է զլխաւոր  
պատճառը, որ ես խօսում եմ: Ես ուղեղս թար-  
մացնելու համար ուզում եմ ազատ դաշտում քիչ  
զբօննել Դէպքը եղած ժամանակ . . . : Մայր, հոգա  
Սանտայի համար, որովհետեւ նա այս աշխարհում  
ոչ ոք չունի . . . : (Գնում է տուն:)

## ՏԵՍԻԼ Թ.

ՆՈՒՆՑԻԱ. (Բոլորվին զարմացած:) Լոլա (Սաստիկ  
ցնորուած:) Գամիլլա (Փողոցի անկիւնում կանգնած:) Բրադի  
և մի քիչ ուշ Պիպուցցա: Փիլոմենա (Իրանց տան  
դռան մօտ կանգնած:)

ՆՈՒՆՑԻԱ. Ի՞նչ են նշանակում այս բոլորը:  
ԲՐԱԴԻ. (Ծտապով առաջ է գալիս) Գնա տուն, Լոլա:  
ԼՈԼԱ. (Ծփոթուած:) Խոչտւ տուն գնամ:

ԲՐԱԴԻ. Որովհետեւ լսւ չէ, որ դու այժմ այս-  
տեղ լինիս: Ես կարող եմ քեզ ուղեկցել . . . : Դու  
մայր նունցիայի մօտ սպասիր, Գամիլլա, եթէ մէկը . . . :  
Փիլոմենա. (Մօտենալով:) Աւխ, Աստուածածին,  
Աստուածածին:

ՆՈՒՆՑԻԱ. Ո՞ւր գնաց որդիս:  
ԳԱՄԻԼԼԱ. (Բրազիին մօտենալով, նրա հետ ցածրածայն  
խօսում է:) Ի՞նչ պատշաճից այժմ:

ԲՐԱԴԻ. (Ճանդարտ:) Յիշար սագ, մի՞թէ չտեսար որ  
թուրիդուն Ալֆիօյի ականջից կծեց. այդ նշանա-  
կումէ կամ թուրիդուն պէտք է մեռնի կամ Ալֆիօն  
ՆՈՒՆՑԻԱ. (Ծփոթուած եւ անհանգիստ:) Ասացէք  
ինձ, ուր գնաց որդիս: Ախ, տէ՛ր Աստուած, այս  
ի՞նչ է նշանակում:

ԼՈԼԱ. Այդ նշանակում է, որ այսօր արիւնալի  
Զատիկ ենք տօնում, իսկ այն զինին, որ մենք եւմե-  
ցինք, պէտք է մեզ թունաւորէ:

ԳԻՂՈՒՅՅԱ. (Բեմի խորքից գոռալով գալիս է:) Նրանք  
սպաննեցին քաւոր Թուրիդդուրին, նրանք սպաննեցին  
քաւոր Թուրիդդուրին: [Բեմում ներկայ եղողները գոռալով  
եւ ճշալով նրա մօտ են վազում: Նունցիան յուսահատութիւնից  
մազերը փետում է: Երկու գինտրներ բեմն են մտնում: Բեմի  
անկիւնում կանգնած<sup>ա</sup> Լուսն բարձրածայն աղաղակելով գետնի-  
վրայ է տապալում:)

Վարագոյն իջնում է:



2788

2013

